Հանրային ֆինանսների տեղեկագիր. թողարկում 2

Տեղեկագրի այս թողարկման մեջ ներկայացված են 2018թ. երկրորդ եռամսյակի ընթացքում «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարության 2016-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրիմի շարք միջոցառումների, ինչպես նաև Եվրամիություն (ԵՄ)-Հայաստան ֆինանսական համաձայնագրով 2017-2018 թվականների համար նախատեսված ԵՄ-ի կողմից ՀՀ-ին ֆինանսական օգնության տրամադրման նախապայմաններ հանդիսացող հանրային ֆինանսների համակարգի գործունեության կատարողականի ցուցանիշների մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների և ստացված ցուցանիշների, ինչպես նաև առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառների 2013-2017թթ. պետական բյուջեների ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկայի մոնիտորինգի արդյունքները:

Ինչպես ծրագրի իրականացման առաջին փուլում (2018թ. առաջին եռամսյակ), այնպես էլ այս փուլում ծրագրի իրականացման խումբը նախ պարզել է, թե 2018թ. երկրորդ եռամսյակում ինչ է իրականացվել Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարության 2016-2020 թվականների գործողությունների ծրագրի միջոցառումներից կամ ստացվել են արդյոք 2018թ. երկրորդ եռամսյակի համար նախատեսված ԵՄ-Հայաստան ֆինանսական համաձայնագրի հանրային ֆինանսների համակարգի գործունեության կատարողականի ցուցանիշները: Այստեղ պետք է ճշել, որ հենց հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում տեղի ունեցան հեղափոխական իրադարձություններ (ապրիլ-մայիս ամիսներին), որոնց արդյունքում նախկին վարչակարգը տապալվեց: Արդյունքում փոխվեց բոլոր նախարարությունների, ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարության (որի հետ ԹԻՀԿ-ն այս ծրագրի շրջանակներում համագործակցում էր) ղեկավարությունը: Նոր վարչապետ ԱԺ-ի կողմից ընտրվեց մայիսի 8-ին, իսկ կառավարությունը ձևավորվեց մայիսի 10-12-ի ընթացքում: Այդ կառավարության ծրագիրը հաստատվեց հունիսի 7-ին: Փոփոխությունները չշրջանցեցին նաև ԱԺ-ն, մասնավորապես նախկինում իշխող Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) դարձավ ընդդիմություն: Ելնելով այս հանգամանքներից՝ ծրագրի իրականացման խումբը որոշեց, որ պետական համապատասխան մարմինների հետ շփումներն ավելի նպատակահարմար կլինի իրականացնել ծրագրի իրականացման հաջորդ փուլում, երբ համապատասխան պետական մարմինների աշխատանքը նոր իրավիճակում կլինի ավելի հստակեցված: Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում տեղ գտած իրադարձությունները հանգեցրին նաև հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումների իրականացման դանդաղեցմանը կամ ժամանակավոր դադարին, որը բնական երևույթ է ցանկացած հեղափոխական փոփոխությունների ժամանակ:

Մոնիտորինգի արդյունքները

1. Պետական բյուջեի կատարման արդյունավետություն. Ծրագրային բյուջետավորման մեթոդաբանություն

Ինչպես արդեն նշվել էր նախորդ տեղեկագրում, ծրագրի իրականացման խումբը, ելնելով նրանից, որ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի N311-Ա հրամանով հաստատված ՀՀ ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները չկիրառվեցին 2018թ. պետական բյուջեի ծրագրային մասի մշակման ժամանակ, որոշեց այդ ուղեցույցների կիրառման վերլուծությունը հետաձգել մինչև 2019թ. բյուջեի նախագծի հրապարակումը: Հաշվի առնելով դա՝ ծրագրի իրականացման խումբը, խորհրդակցելով ԲՀՀ-Հայաստանի հետ, որոշեց իրականացնել 2013-2017թթ. պետական բյուջեների առողջապահության և սոցիալական պաշտպանության (այդ ոլորտները ծրագրի իրականացման խումբն ընտրեց ԲՀՀ-Հայաստանի հետ խորհրդակցելու արդյունքում) մի շարի ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշների մոնիտորինգ: Մոնիտորինգի նպատակն է պարզել, թե որքանով են այդ ցուցանիշները համահունչ այդ ծրագրերի համար սահմանված խաղաթականություններին, վեր հանել այդ ցուցանիշների պլանավորված և փաստացի արժեքների միջև շեղումները և վերլուծել այդ շեղումների հնարավոր պատճառները: ***Հավելված 1-ում*** բերված են մոնիտորինգի արդյունքները և դրանց նախնական վերլուծությունը: Այդ վերլուծությունը կամբողջացվի ծրագրի իրականացման հաջորդ փուլում:

2. Պետական բյուջեի վերաբերյալ իրազեկվածություն (խաղաթացու բյուջե)

Ինչպես արդեն նշվել էր Տեղեկագրի նախորդ թողարկման մեջ, 2017թ. ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարությունը, ոլորտում ակտիվ խաղաթացիական հասարակության կազմակերպությունների հետ խորհրդակցելով և նրանց հավանությամբ, պետք է մշակեր պարզեցված պետական բյուջեի և պարզեցված պետական բյուջեի կատարողականի օրինակելի ձևերը: Հաշվետու ժամանակահատվածում նախարարության պաշտոնական կայքում այն այդպես էլ առկա չէր: Չկա նաև որևէ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք նախարարությունը ճշնարիկել է ոլորտի հետ առնչվող հասարակական կազմակերպությունների հետ դեռևս այս տարվա առաջին եռամսյակում նախարարության կայքում տեղադրված ՀՀ 2018թ.-ի պետական բյուջեի համառոտ ուղեցույցը (խաղաթացու բյուջեն): Այդ պահանջը նույնպես հանդիսանում է ԵՄ-Հայաստան ֆինանսական համաձայնագրի հանրային ֆինանսների համակարգի գործունեության կատարողականի այս ցուցանիշի 2018թ.-ի թիրախային արդյունքներից մեկը:

Միևնույն ժամանակ, նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում իր կայքում տեղադրեց 2017թ. պետական բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունը (տե՛ս http://www.minfin.am/hy/page/2017_tvakan29): Հարկ է նշել, որ ԵՄ-Հայաստան ֆինանսական համաձայնագրի հանրային ֆինանսների համակարգի գործունեության կատարողականի այս ցուցանիշի համար նշված հաշվետվության պատրաստումը և հրապարակումը որպես թիրախային արդյունք նախատեսված չէ, և այդ իմաստով ՀՀ իշխանությունները նույնիսկ ինչ-որ տեղ գերակատարել են այդ ցուցանիշի կատարողականը, քանի որ որպես այս ցուցանիշի թիրախային արդյունք նախատեսված է միայն 2018թ. պետական բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունը, որը, բնականաբար, պետք է պատրաստ լինի հաջորդ, 2019թ. կեսերին:

Վերլուծելով 2017թ. պետական բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունը՝ կարելի է գալ մի շարք եզրահանգումների: Դրանցից հիմնականները են.

- Ի տարբերություն 2018թ.-ի պետական բյուջեի համառոտ ուղեցույցի (հաղորդագրություն), որը կազմված էր Word ձևաչափով՝ այս փաստաթուղթը PowerPoint ձևաչափով է, որն օգտատերի համար ավելի հարմար ձևաչափ է: Այն բաղկացած է 29 սլայդից, որոնք համառոտ/հանրամատչելի ներկայացնում են պետական բյուջեի ամբողջական հաշվետվության հիմնական կետերը՝ ՀՀ տնտեսության արձանագրած միտումները (վերջին հինգ տարիների կտրվածքով), համախմբված բյուջեի, պետական եկամուտների և ծախսերի, ինչպես նաև պետական բյուջեի պակասուրդի և պարտքի վերաբերյալ: Պարզեցված հաշվետվությունն առանձնանում է նաև գրագետ կազմված վիզուալ բովանդակությամբ և ինֆոգրաֆիկայով:
- Միջազգային պրակտիկայում բյուջեի կատարման մասին հաշվետվություններում հատկապես կարևորվում է ծրագրավորված և փաստացի ծախսերի և եկամուտների տարբերության վերաբերյալ հիմնավոր վերլուծությունը (meaningful analysis), որտեղ հստակ ներկայացված են նախատեսված ցուցանիշներից շեղումների հիմնական պատճառները:[1] Պարզեցված հաշվետվության մեջ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի սլայդներում միայն հպանցիկ արձանագրվել է, թե որքան տոկոսով են կատարվել ճշտված ծրագրով սահմանված որոշ ցուցանիշներ՝ առանց բացատրելու, թե ինչով են պայմանավորված շեղումները (որոշ դեպքերում էական, օրինակ՝ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների տրամադրած պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների (բացի հարկերն ու տուրքերը) գծով ծրագրավորված ցուցանիշները): Այս փաստաթղթում տրամաբանական, դյուրամարս և ոչ ծավալուն բացատրություններ կայացնելը կարող է նպաստել պետական բյուջեի նախագծում արտացոլված թվերի արժանահավատության բարձրացմանը:

[1]Տես-https://www.internationalbudget.org/wp-content/uploads/budget-credibility-what-can-we-learn-from-budget-execution-reports-ibp-2018.pdfէջ 8

- Պետական բյուջեի ծախսերի հատվածում պարզապես ներկայացված է դրանց փաստացի բաշխումն ըստ ոլորտների առանց ծրագրավորված ծախսերի հետ համադրման, ինչն էական է հասկանալու, թե գերակա ուղղություններում որքան արդյունավետ է աշխատել կառավարությունը:
- Ինչպես 2018թ.-ի պետական բյուջեի համառոտ ուղեցույցի պարագայում, այս անգամ ևս պարզեցված հաշվետվությունը կայքում տեղադրելուց հետո ֆինանսների նախարարությունն ակտիվորեն չի իրազեկել հանրությանը նոր փաստաթղթի վերաբերյալ: Ավելին, ինչպես այդ ուղեցույցի դեպքում, այս անգամ էլ հաշվետվությունը կարծես թե թաքցված է նախարարության կայքում: Այն փոխանակ դրվի հենց այդ կայքի բացման էջում, դրված է ՀՀ Գանձապետարանի բաժնում, որը ոչ ցանկացած օգտատեր կկարողանա նկատել:

3. Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի նկատմամբ վերահսկողության արդյունավետություն

2018թ. թիրախային արդյունքի («ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը գումարում է նիստեր, որոնք բաց կլինեն հանրության և լրատվամիջոցների համար և այդ նիստերի ժամանակ կքննարկվեն Պետական բյուջեի մասին օրենքը, Պետական բյուջեի տարեկան կատարողականի մասին զեկույցը, դրա աուդիտորական եզրակացությունը և աուդիտորական տարեկան հաշվետվությունը: Նիստերի սղագրությունը պետք է հրապարակվի ԱԺ կայքում») մասով, ինչպես և նախորդ մոնիտորինգային փուլում, չկա հրապարակային որևէ տեղեկատվություն, թե արդյոք ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն այս տարի գումարել է այդպիսի բաց նիստեր 2018թ. թիրախային արդյունքում նշված հարցերի վերաբերյալ:

4. Արտաքին աուդիտ. ISSAI (Աուդիտի բարձրագույն հաստատությունների միջազգային ստանդարտներ) ստանդարտների կիրառում պրակտիկայում

Այս ցուցանիշի 2018թ. թիրախային արդյունքի («Հիմնվելով նոր օրենսդրության և Հանրային սեկտորի աուդիտի (ISSAI-100-999) ISSAI հիմնարար սկզբունքների վրա պետք է իրականացվեն հետևյալ աուդիտները, որոնց արդյունքները պետք է ներկայացվեն ԱԺ-ին, իսկ զեկույցները տեղադրվեն Հաշվեքննիչ պալատի կայքում. – կառավարության՝ պետական բյուջեի ծախսերի առնվազն 17.5% ներառող կառույցների 2017թ. բյուջետային տարում ֆինանսական գործունեության և դրան առնչվող ֆինանսական փաստաթղթերի ֆինանսական աուդիտ (ISSAI 200) և համապատասխանության աուդիտ (ISSAI 400), - առնվազն 2 կատարողականի աուդիտ (ISSAI 300), որոնց առարկաները կտարբերվեն նախորդ տարվա առարկաներից») կատարումը պետք է արտացոլվի պալատի ընթացիկ եզրակացությունների միջոցով, որոնք պետք է տեղադրված լինեն Հաշվեքննիչ

պալատի պաշտոնական կայքի (www.armsai.am) «Ընթացիկ եզրակացություններ» բաժնում (տե՛ս http://armsai.am/hy/current-conclusions հասցեով): Հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ նշված բաժնում որևէ ընթացիկ եզրակացություն դրված չէր, որը նշանակում է, որ այդ պահի դրությամբ ավարտված չէր որևէ կառույցի աուդիտ:

5. Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարության 2016-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրի 4.1.1 կետի (Ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի (ՖԿՀ) ներդրում) այն միջոցառումները, որոնք նախատեսված են իրականացնել 2016-2018 թվականներին:

Տեղեկագրի նախորդ թողարկման մեջ նշվել էր, որ օտարերկրյա մասնագետների մասնակցությամբ և միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ մշակվում էր համակարգի ներդրման համար անհրաժեշտ մեթոդաբանական ուղեցույցը, որն, ըստ նախարարության մասնագետների, պատրաստ կլինի 2018թ. հունիսի վերջում: Հաշվետու ժամանակահատվածի վերջի, որը համընկնում է նաև նախարարության նշած մոտավոր ժամկետի հետ, դրությամբ, համածայն միջոցառման իրականացումը համակարգող ՀՀ ֆինանսների փոխնախարարի կողմից տրամադրված տեղեկատվության, վերոնշյալ ուղեցույցի նախագիծը պատրաստ էր: Այս տարվա սեպտեմբերից, համածայն միջոցառման իրականացումը համակարգող փոխնախարարի, կսկսվի մշակված մեթոդաբանության պիլոտային փորձարկումը: Փոխնախարարի հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ մինչ այդ ծրագրի ղեկավարը կհանդիպի միջոցառման իրականացման պատասխանատուների հետ՝ ճշտելու համար ԹԻՀԿ-ի հնարավոր ներգրավումն այդ պիլոտային փորձարկմանը:

Բացի նշված ցուցանիշների և միջոցառումների մոնիտորինգից, հաշվետու ժամանակահատվածում սկսվեց նաև ծրագրի շրջանակներում նախատեսված ևս մեկ ուղղությամբ մոնիտորինգ: Խոսքը գնում է ՀՀ կառավարության կողմից 2013-2017թթ. ընթացքում ստացված օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված վարկերի և դրամաշնորհների մասին: Ծրագրով նախատեսվում է պատրաստել դրանց տվյալների բազան, որը կներառի այդ վարկերի և դրամաշնորհների նախատեսված (որքան պետք է կառավարությունը ստանար համածայն վարկային կամ դրամաշնորհային պայմանագրերի), փաստացի, ինչպես նաև մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը այդ փաստացի գումարներից ստացված տրանշերի չափերը: Ներկա դրությամբ արդեն պատրաստ է ստացված վարկերի և դրամաշնորհների նախատեսված չափերի մասով տվյալների բազան: Այն բերված է սույն Տեղեկագրի ***Հավելված 2-ում***:

Հավելված 1. Առողջապահական և սոցիալական պաշտպանության ոլորտներում պետական բյուջեի 2013-2017թթ. որոշ ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկայի մոնիտորինգ

ՆԱԽԱԲԱՆ

Մոնիտորինգի համար ընտրված են առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների 2013-2017թթ. իրականացված հետևյալ բյուջետային ծրագրերը՝ ծրագրային բյուջետավորման ֆորմատով.

Առողջապահության ոլորտ

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ

Այս ծրագիրը նպատակաուղղված է մատուցելու բժշկական օգնություն և ծառայություններ բնակչության սոցիալապես անապահով խմբերին բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների:

Սրտի վիրահատության ծառայություններ

ՀՀ պետական բյուջեից սրտի անհետաձգելի վիրահատությունների և կորոնարոգրաֆիկ հետազոտությունների ամբողջ ծավալի ծառայությունների ձեռքբերում:

Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ

Նշված ծրագիրը նախատեսվում է սոցիալապես անապահով, նպաստառու (30 մլնվոր և ավելի) ընտանիքների անպտուղ զույգերին վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ մատուցելու համար՝ յուրաքանչյուր տարի 2 տարիքային խումբ ընդգրկելու ընթացակարգով:

Սոցիալական ապահովության ոլորտ

Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում

Ծրագրի նպատակն է շահառուի սոցիալական ներառման, հաշմանդամներին սայլակների և լսողական սարքերի ապահովման միջոցով նրանց կենսագործունեության սահմանափակումների լրիվ կամ մասնակի հաղթահարում, վոխհատուցում (փոխարինում), հասարակական կյանքի բոլոր բնագավառներում այլ անձանց հետ հավասար հնարավորությունների ստեղծում, սոցիալական համայնքների վերականգնում, կյանքի որակի բարելավում, լիարժեք և ներդաշնակ զարգացում:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագիր

Սա ՀՀ պետական բյուջեի ամենամեծ և ամենակարևոր ծրագրերից մեկն է՝ ուղղված աղքատության կրճատմանը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առողջապահության ոլորտ

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայությունների ֆինանսական ցուցանիշները

2013 թվականին «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվել է 38,951 հիվանդանոցային դեպքի բուժում 4,141.1 մլն դրամ գումարով: Հաշվետու տարում պետական բյուջեից փաստացի ավելի քան 4.3 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2013 թվականին բուժօգնություն է ստացել 46.0 հազար հիվանդ:

2014 թվականին «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում էր 65,951 հիվանդանոցային դեպքի բուժում 7,430.0 մլն դրամ գումարով՝ 2013 թվականի 38,951 դեպքի և 4,141.1 մլն դրամի դիմաց կամ 27 հազար դեպքով և 3,288.9 մլն դրամով ավելի, որից դեպքերի թվաքանակի ավելացմամբ պայմանավորված՝ 3.041.8 մլն դրամ, իսկ մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին արժեքի ավելացմամբ պայմանավորված՝ 247.1 մլն դրամ:

2014 թվականին պետական բյուջեից շուրջ 6.6 մլրդ դրամ էր տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2014 թվականին բուժօգնություն էր ստացել 61.4 հազար հիվանդ՝ 2013 թվականի 46 հազարի դիմաց: 2013 թվականի համեմատ ճշված ծախսերն աճել էին 52.5%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

2015 թվականին «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում էր 62,422 դեպքի բուժում 7,202.3 մլն դրամով 2014թ. 65,951 դեպքի և 7,430.0 մլն դրամի դիմաց կամ 3,529 դեպքով և 227.7 մլն դրամով պակաս: Սույն ծրագրից 258.7 մլն դրամ տեղափոխվել էր «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր, 69.1 մլն դրամ՝ «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիր,

իսկ 78.6 մլն դրամ՝ «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր:

Միաժամանակ, նշված ծրագրի գծով մեկ հիվանդի բուժման միջին արժեքի ավելացմամբ պայմանավորված ծախսերը ավելացել են 178.7 մլն դրամով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 7.4 մլրդ դրամ էր տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 100.0%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2015 թվականին բուժօգնություն էր ստացել 66.5 հազար հիվանդ՝ 2014 թվականի 61.4 հազարի դիմաց: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել էին 13.1%-ով կամ 862.5 մլն դրամով:

2016 թվականին «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում էր 58,010 դեպքի բուժում 6,205.6 մլն դրամով 2015 թվականի 62,422 դեպքի և 7,202.2 մլն դրամի դիմաց կամ 4,412 դեպքով և 996.6 մլն դրամով պակաս: Սույն ծրագրից 670.8 մլն դրամ (1,141 դեպք) տեղափոխվել է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր, իսկ 350.0 մլն դրամ (3,271 դեպք)՝ «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր:

Միևնույն ժամանակ, նշված ծրագրով էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերը ավելացել են 24.2 մլն դրամով:

Հաշվետու 2016թ. տարում պետական բյուջեից ավելի քան 6.4 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն էր ստացել 63.1 հազար հիվանդ՝ 2015 թվականի 66.5 հազարի դիմաց: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 14.2%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2016 թվականի սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների ծախսերի տեղափոխմամբ «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր:

2017 թվականին «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 58,010 դեպքի բուժում 6,202.7 մլն դրամով 2016 թվականի նույն ֆանակով դեպքերի և 6,205.6 մլն դրամի դիմաց կամ 2.9 մլն դրամով պակաս: Գազի և էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված ծախսերը նվազել էին 20.5 մլն դրամով:

Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի ապահովմամբ պայմանավորված ծախսերը ավելացել էին 17.6 մլն դրամով:

2017թ. պետական բյուջեից ավելի ֆան 6.3 մլրդ դրամ էր տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.2% կատարողական: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն էր ստացել 64.5 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 64.9 հազարի և 2016 թվականի 63.1 հազարի դիմաց: 2016 թվականի համեմատ ճշված ծախսերը նվազել էին 0.7%-ով կամ 47.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2017 թվականին գազի և էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ:

Գծապատկեր 3.1.1.1 Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայությունների ծրագրի ֆինանսական ցուցանիշները (հազ դրամ)



Գծապատկեր 3.1.1.2 Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայությունների ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշները



3.1.2 Սրտի վիրահատության ծառայություններ

2015 թվականին «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում էր 420 դեպքի բուժում 500.0 մլն դրամով:

2015 հաշվետու տարում 9.1 մլրդ դրամ էր օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: 2014 թվականի համեմատ նշված ծախսերն աճել էին 18.9%-ով կամ ավելի քան 1.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված էր 2015 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեից սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների ձեռքբերման համար միջոցների հատկացմամբ, ինչպես նաև հոգեկան ու նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

2016 թվականին «Սրտի վիրահատության ծառայություններ» նոր ծրագրի գծով նախատեսվել էր 3,505 դեպքի բուժում 3,085.7 մլն դրամով: Նշված ծրագրում նախատեսվում էր համախմբել «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ», «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ», «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» և «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում կատարվող սրտի վիրահատությունների և կորոնարոգրաֆիկ հետազոտությունների ամբողջ ծավալը:

Հաշվետու 2016 թվականին Սրտի վիրահատությունների ծառայությունների նպատակով ծախսվել է 3.6 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են շուրջ 2.8 անգամ: Աճը պայմանավորված է առողջապահության ոլորտի այլ ծրագրերից սրտի վիրահատությանը հատկացվող միջոցները տվյալ ծրագիր տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է մատուցվել 5.7 հազար հիվանդի՝ նախատեսված 3.5 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսվածի համեմատ ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության վաստացի միջին գնի նվազման հաշվին:

2017 թվականին «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել էր 3,505 դեպքի բուժում 3,084.3 մլն դրամ գումարով՝ 2016 թվականի նույն դեպքի և 3,085.7 մլն դրամի դիմաց կամ 1.4 մլն դրամով պակաս: Գազի և էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված ծախսերը նվազել էին 10.2 մլն դրամով:

Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի ապահովմամբ պայմանավորված ծախսերը ավելացել էին 8.8 մլն դրամով:

Հաշվետու 2017 թվականին սրտի վիրահատությունների ծառայությունների նպատակով ծախսվել էր 3.5 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին բուժօգնություն էր մատուցվել 7.2 հազար հիվանդի՝ նախատեսված 6.8 հազարի և 2016 թվականի 5.7 հազարի դիմաց: Իրացեով նախատեսվածի համեմատ ավելի մեծ թվով հիվանդների ապասարկումն ապահովվել էր բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ ճշված ծախսերը նվազել էին 137.3 մլն դրամով կամ 3.8%-ով: Նվազումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2017 թվականի հոկտեմբերից պետական հիմնարկների աշխատակիցներին մատուցվող սրտի վիրահատության ծառայությունները մատուցվել են «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝ մաս կազմելով վերջինիս գծով առողջության ապահովագրության փաթեթների շրջանակներում մատուցվող ծառայությունների ցանկին:

Գծապատկեր 3.1.2.1 Սրտի վիրահատության ծառայությունների ծրագրի ֆինանսական ցուցանիշները (հազ դրամ)



Գծապատկեր 3.1.2.2 Սրտի վիրահատության ծառայությունների ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշները


8000
7000
6000
5000
4000
3000
2000
1000
0
Դեպքերի թիվը
4000000
3500000
3000000
2500000
2000000
1500000
1000000
500000
0
2013
2014
2015
2016
2017
Տարեկան պլան
Տարեկան ճշտված պլան
Փաստացի
Տարեկան փաստացի ֆինանսավորում (հազ դրամ)

3.1.3 Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ

2015 թվականի բյուջեով նախատեսվել էր Մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում անպտղության կանխարգելման և այդ խնդրի հաղթահարման հետ կապված (Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի համաձայն) սոցիալապես անապահով, նպաստառու (30 միավոր և ավելի) ընտանիքների անպտուղ զույգերին՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ մատուցելու համար «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 78.6 մլն դրամ տեղափոխվել էր սույն խմբի «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր:

«Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում էր 696 դեպքի բուժում 78.6 մլն դրամով:

Նշված ծրագիրը նախատեսվում էր սոցիալապես անապահով, նպաստառու (30 միավոր և ավելի) ընտանիքների անպտուղ զույգերին՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ մատուցելու համար՝ յուրաքանչյուր տարի 2 տարիքային խումբ ընդգրկելու ընթացակարգով: Անվճար բուժօգնության իրավունք ունեցող ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 36 և ավելի միավոր ունեցող նպաստառու կանանց համար այն իրականացվում է անվճար, իսկ 30-35 միավոր ունեցողների համար՝ 50 տոկոս զեղչով:

Ծրագրի շրջանակներում հաշվետու 2015 թվականին ծախսվել է 56.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 71.3%-ը: Շեղումը պայմանավորված էր բուժօգնության դեպքերի փաստացի ֆանակով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 180 հիվանդ՝ նախատեսված 696-ի փոխարեն: Նշենք, որ ծախսված գումարից 50 մլն դրամը հատկացվել էր «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ», «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն» և «Շենգավիթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններին՝ որպես կանխավճար՝ 2016 թվականի ընթացքում սահմանամերձ գյուղական համայնքների անպտղություն ունեցող 35 ամուսնական զույգերի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու համար:

2016 թվականին «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում էր 696 դեպքի բուժում 78.6 մլն դրամով՝ 2015 թվականի չափով:

2016 թվականին անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել էր 35.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 80.3%-ը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել էին արտամարմնային բեղմնավորումից առաջ կատարվող 3493 ախտորոշիչ հետազոտություններ: Նախորդ տարվա համեմատ ճշված ծախսերը նվազել էին 36.1%-ով կամ 20.2 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2015 թվականին 50 մլն դրամ հատկացվել էր որպես կանխավճար՝ 2016 թվականի ընթացքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ սահմանամերձ գյուղական համայնքների անպտղություն ունեցող 35 ամուսնական զույգերի բժշկական օգնություն և սպասարկում (արտամարմնային բեղմնավորում) տրամադրելու համար: Ծրագիրը սկսել է իրականացվել 2015 թվականի հոկտեմբեր ամսից:

Շարունակվել էր սոցիալապես անապահով ընտանիքների անպտղության խնդրի հաղթահարմանն ուղղված ՀՀ կառավարության 27 մայիսի 2015թ. N568 որոշման շարունակական կիրարկումը, շուրջ 90 անպտուղ զույգ հետազոտվել և բուժվել էր պետական պատվերի շրջանակներում, կազմակերպվել էր 35 անպտուղ ամուսնական զույգի արտամարմնային բեղմնավորման հետազոտություն և բուժօգնություն:

2017 թվականին «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել էր 696 դեպքի բուժում 78.6 մլն դրամով՝ 2016 թվականի չափով:

2017 թվականին անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել էր 15.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ ճշված ծախսերը նվազել էին 57.2%-ով կամ 20.5 մլն դրամով, ինչը պայմանավորված էր տարվա ընթացքում ծրագրի արդյունավետության գնահատման նախնական արդյունքների հիման վրա ծրագրի ժամանակավոր դադարեցման և վերանայմանն ուղղված աշխատանքների մեկնարկով: Ճշված ծրագիրը նախատեսված է եղել սոցիալապես անապահով, նպաստառու (30 և ավելի միավոր ունեցող) ընտանիքների անպտուղ զույգերին վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ մատուցելու համար՝ յուրաքանչյուր տարի 2 տարիֆային խումբ ընդգրկելու ընթացակարգով, սակայն 2017 թվականի արդյունքներով ի հայտ են եկել ճշված խմբի շահառուների հավաքագրման և

ծառայությունների արդյունավետության գնահատման խնդիրներ, որից բխել է ծրագրի սկզբունքների վերանայման անհրաժեշտությունը:

Գծապատկեր 3.1.3.1 Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ծրագրի ֆինանսական ցուցանիշները (հազ դրամ)



Գծապատկեր 3.1.3.2 Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ոչ ֆինանսական ցուցանիշներ



Սոցիալական ապահովության ոլորտ

3.2.1 Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում

2013 թվականին «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրի գծով ծախսը կազմել էր 858.6 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): 2013 թվականին նախատեսվում էր արտադրել և բաշխել պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և վերանորոգման պարագաներ, ընդամենը՝ 13799 պարագա (2012 թվականին՝ 13945 պարագա): Այսպիսով.

ա) 12291 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների գծով՝ 755.5 մլն դրամ (2012 թվականին՝ 12498 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ),

բ) 1298 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների վերանորոգման գծով՝ 66.6 մլն դրամ (2012 թվականին՝ 1257 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագայի վերանորոգման պարագաներ),

գ) ձայնաստեղծ սարքերի գծով՝ 80 հատ՝ 28.0 մլն դրամ (2012 թվականին՝ 100 հատ),

դ) աչքի պրոթեզների գծով՝ 130 հատ՝ 8.5 մլն դրամ (2012 թվականին՝ 90 հատ):

Հաշվետու տարում հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 858.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ հաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը և վերանորոգումը, տրամադրվել են նաև ձայնաստեղծ սարքեր և աչքի պրոթեզներ: Նշված ծախսերը 2012 թվականի համեմատ գրեթե փոփոխություն չեն կրել:

2014 թվականին **"Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում"** ծրագրի գծով ծախսը կազմել էր 880.1 մլն դրամ (2013 թվականին՝ 858.6 մլն դրամ): 2013 թվականի պետական բյուջեի նկատմամբ ծախսերի աճը կազմում էր 21.5 մլն դրամ (պրոթեզաօրթոպեդիկ պարագաները տրվում են ՀՀ կառավարության 12.04.2007 թվականի N 453-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ և հաջորդ տարվա 1-ին եռամսյակում դրանց կարիքը ունեցող անձանց), որը պայմանավորված էր.

ա/ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների թվի փոփոխությամբ կամ 13495 պարագա, այդ թվում՝ 5144 պրոթեզաօրթոպեդիկ պարագա, 7316 վերականգնողական պարագա, 1035 վերանորոգման պարագաներ 2013 թվականի13 799 պարագայի դիմաց՝ գների աճի պայմաններում կամ միջին գինը կանխատեսվում է 60.8 հազ. դրամ 2013 թվականին նախատեսված 60.5 հազ. դրամի դիմաց՝ 820.8 մլն դրամ,

բ/ աչքի պրոթեզի (տրվում է երեխաների համար՝ տարեկան, մեծահասակների համար՝ երկու տարին մեկ անգամ) բանակի աճով կամ 150 հատ 2013 թվականի 130-ի դիմաց (2014 թվականին ծրագրում ընդգրկվելու համար դիմում են երկու և ավելի տարին լրացած պրոթեզավորված անձինք՝ 2012 թվականին պրոթեզավորվել էր 90 հաշմանդամ, որոնց պրոթեզավորման ժամկետը լրացում էր 2014 թվականին)՝ 9.8 մլն դրամ,

գ/ ձայնաստեղծ սարքերի (տրվում է հինգ տարին մեկ անգամ)՝ 80 հատ պահպանման պայմաններում՝ 27.7 մլն դրամ (մեկ միավորի գնի հավազման պայմաններում կամ 346.0 հազ. դրամ 2013 թվականին նախատեսված 350.0 հազ. դրամի դիմաց),

դ/ "Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում" ծրագրից եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի (250 հատ, տրվում է հինգ տարին մեկ անգամ) գումարի ներառմամբ՝ 20.0 մլն դրամ,

ե/ սայլակների և լսողական սարքերի հարմարեցման և տեղադրման ծառայությունների համար ծախսերի նախատեսմամբ՝ յուրաքանչյուրի գծով 0.9 մլն դրամ կամ ընդամենը՝ 1.8 մլն դրամ:

Հաշվետու 2014 թվականին հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել էր 854 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ հաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, վերանորոգումը, տրամադրվել են նաև ձայնաստեղծ սարքեր և աչքի պրոթեզներ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխություն չեն կրել:

2015 թվականին «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրի գծով ծախսը կազմում էր 856.3 մլն դրամ 2014 թվականի 880.1 մլն դրամի դիմաց (պրոթեզաօրթոպեդիկ պարագաները տրվում են ՀՀ կառավարության 12.04.2007 թվականի N 453-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ և հաջորդ տարվա 1-ին եռամսյակում դրանց կարիքը ունեցող անձանց): Ծախսերի նվազումը կազմել էր 23.7 մլն դրամ, որը պայմանավորված էր.

ա/ եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի թվի (50-ով) պակասեցման հետևանքով 4.0 մլն դրամով նվազմամբ և կազմում էր 16.0 մլն դրամ (2014 թվականին՝ 250 հատ 20.0 մլն դրամ գումարով, տրվում է հինգ տարին մեկ անգամ), այն ամբողջապես տեղափոխվել է «Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրումե ծրագիր,

բ/ սայլակների և լսողական սարքերի հարմարեցման և տեղադրման ծառայությունների համար 1.9 մլն դրամ գումարի տեղափոխմամբ «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» ծրագիր,

գ/ աչքի պրոթեզի թվի ավելացման հետ կապված (20 հատ) 1.3 մլն դրամի աճով և կազմում էր 11.1 մլն դրամ (2014 թվականին՝ 150 հատ 9.8 մլն դրամ գումարով, երեխաներին տրվում է տարեկան մեկ անգամ, մեծահասակներին՝ երկու տարին մեկ անգամ),

դ/ ձայնաստեղծ սարքերի թիվը և գումարը պահպանվել էր նախորդ տարվա չափով (2014 թվականին՝ 80 հատ 27.7 մլն դրամ գումարով, տրվում է հինգ տարին մեկ անգամ),

ե/ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգողական պարագաների թվի 378 միավորի պակասեցման հետևանքով 3.2 մլն դրամի նվազմամբ և կազմում էր 817.6 մլն դրամ (2014 թվականին՝ 13 495 պարագա 820.8 մլն դրամ գումարով):

Այսպիսով, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ընդհանուր թիվը կանխատեսվում է 13 367 2014 թվականին նախատեսված 13 725 դիմաց:

Հաշվետու 2015 թվականին Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել էր 824.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին տրամադրվել էր 4673 հատ պրոթեզաօրթոպեդիկ պարագա (2014թ.՝ 4250), 7723 հատ վերականգնողական պարագա (2014թ.՝ 7586), 80 հատ ձայնաստեղծ սարք (2014թ.՝ 80), 170 հատ աչքի պրոթեզ (2014թ.՝ 150), կատարվել է 657 վերանորոգում (2014թ.՝ 592): Ծախսած ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել էին 3.4%-ով կամ 29.4 մլն դրամով, ինչը պայմանավորված էր մրցույթի արդյունքում գնման ենթակա ապրանքների՝ ավելի ցածր գներով ձեռքբերմամբ:

2016 թվականին «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրի գծով ծախսը կազմում էր 856.3 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): Պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնման և վերանորոգման պարագաները տրվում են ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N 1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ դրանց կարիքը ունեցող անձանց:

2016 թվականի համար նախատեսվում էր ձեռք բերել և բաշխել.

ա/ աչքի պրոթեզ 200 հատ՝ 13.0 մլն դրամ,

բ/ ձայնաստեղծ սարքեր 80 հատ՝ 27.7 մլն դրամ,

գ/ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգողական պարագաներ 13600 հատ՝ 815.6 մլն դրամ:

Այսպիսով, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ընդհանուր թիվը կանխատեսվում էր 13 880 2015 թվականին նախատեսված 13 367 դիմաց:

Հաշվետու 2016 թվականին հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել էր 828.3 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Սույն ծրագրով հաշմանդամներին տրամադրվել էին 12152 (2015թ.՝ 8923) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, 80 (2015թ.՝ 80) ձայնաստեղծ սարքեր, 200 (2015թ.՝ 170) աչքի պրոթեզ և իրականացվել էր 787 (2015թ.՝ 657) պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգում: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել էին 0.4%-ով: Ձեռք բերված պարագաների թվի աճը պայմանավորված էր մրցույթների արդյունքում ձևավորված ավելի ցածր գներով:

2017 թվականին «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրի գծով ծախսը կազմում էր 856.3 մլն դրամ (պահպանվել է 2016 թվականի համար նախատեսված չափը)՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների փոփոխության պայմաններում (պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնման և վերանորոգման պարագաները տրվում են ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N 1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ դրանց կարիքը ունեցող անձանց):

2017 թվականի համար նախատեսվում էր ձեռք բերել և բաշխել.

ա/ աչքի պրոթեզ 200 հատ՝ 13.0 մլն դրամ (պահպանվել է 2016 թվականի մակարդակը),

բ/ ձայնաստեղծ սարքեր 100 հատ՝ 34.5 մլն դրամ (2016 թվականի 80 դիմաց),

գ/ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգողական պարագաներ 13 245 հատ՝ 815.6 մլն դրամ (2016 թվականի 13 600 դիմաց):

Այսպիսով, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ընդհանուր թիվը կանխատեսվում էր 13 545 2016 թվականին նախատեսված 13 880 դիմաց:

Հաշվետու 2017 թվականին հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 747.7 մլն դրամ՝ ապահովելով 90.8% կատարողական:

Սույն ծրագրի շրջանակներում հաշմանդամներին տրամադրվել էր 3810 պրոթեզաօրթոպեդիկ պարագա՝ նախատեսված 4675-ի փոխարեն, 3232 վերականգնողական պարագա՝ նախատեսված 7936-ի փոխարեն, 100 ձայնաստեղծ սարք՝ նախատեսվածին համապատասխան, 186 աչքի պրոթեզ՝ նախատեսված 200-ի փոխարեն և 543 պրոթեզաօրթոպեդիկ պարագայի վերանորոգում՝ նախատեսված 634-ի փոխարեն: Տնտեսումը պայմանավորված էր պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների գնման ընթացակարգերի մի մասը դատարանի վճռով կասեցնելու և վաստացի դիմած հաշմանդամների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքներով: Նշվածով պայմանավորված՝ արձանագրվել էր նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի 9.7%-ով անկում:

Գծապատկեր 3.2.1.1 Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում (հազ դրամ)



Գծանկար 3.2.1.2 Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում ծառայությունների ոչ ֆինանսական ցուցանիշներ



3.2.2 Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ

2013 թվականին «Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագրի ծախսը կազմում է 37 105.8 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրով նախատեսվող նպաստառուների թվաքանակը կազմում էր 104 685 ընտանիք, իսկ նպաստի միջին ամսական չափը՝ 29 537.8 դրամ:

Հաշվետու 2013 թվականին 34.6 մլրդ դրամ, տրամադրվել էր ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսավորմանը, որը կազմել էր նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել էին 4.5%-ով, որը պայմանավորված էր 2013 թվականին նպաստառու ընտանիքների միջին թվաքանակի աճով: 2013 թվականին այն կազմել էր 102570՝ 2012 թվականի 96309-ի դիմաց, իսկ նպաստի նվազագույն չափը մնացել է անփոփոխ՝ կազմելով 16000 դրամ:

2014 թվականին «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի ծախսը կազմում էր 37 105.8 մլն դրամ (պահպանվել էր 2013 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրով նախատեսվող նպաստառուների թվաքանակը կազմում էր 104 685 ընտանիք, իսկ նպաստի միջին ամսական չափը՝ 29 537.8 դրամ:

2014 թվականին 35.4 մլրդ դրամ, տրամադրվել էր ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել էր նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել էին 2.5%-ով, որը պայմանավորված էր նպաստի չափի բարձրացման հանգամանքով: 2014 թվականի օգոստոսի 1-ից նպաստի բազային մասը բարձրացել էր 1000 դրամով:

2015 թվականին «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի ծախսը կազմում էր շուրջ 38 362.0 մլն դրամ (2014 թվականին՝ 37 105.8 մլն դրամ): Ծախսերի աճը 1 256.2 մլն դրամի չափով պայմանավորված էր նպաստի միջին ամսական չափի աճով կամ 30 537.6 դրամ (2014 թվականի օգոստոսի 1-ից նպաստի բազային մասը աճել էր 1.0 հազ. դրամով և կազմում էր 17.0 հազ. դրամ) 2014 թվականի 29 537.8 դրամի դիմաց՝ պահպանելով 2014 թվականին նախատեսված նպաստառուների թվաքանակը՝ 104 685 ընտանիք:

Հաշվետու 2015 թվականին 36.6 մլրդ դրամ, տրամադրվել էր ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել էր նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին փաստացի նպաստ էին ստացել ամսական միջինը 103745 ընտանիք, նախատեսված 104685 ընտանիքների փոխարեն: Նախորդ տարվա

համեմատ այս ծախսերն աճել էին 3.2%-ով՝ պայմանավորված նպաստի չափի բարձրացմամբ: 2014 թվականի օգոստոսի 1-ից ընտանեկան նպաստի բազային մասը սահմանվել էր 17000 դրամ՝ նախկին 16000 դրամի փոխարեն:

2016 թվականին «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի ծախսը կազմել էր շուրջ 38,362.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսում էր նպաստ հատկացնել 104 685 ընտանիքի, իսկ նպաստի միջին ամսական չափը կազմում էր 30 537.6 դրամ:

Հաշվետու տարում 36.7 մլրդ դրամ, տրամադրվել էր ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին փաստացի նպաստ էին ստացել ամսական միջինը 104475 ընտանիք՝ նախատեսված 104685 ընտանիքների փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել էին 0.5%-ով՝ պայմանավորված փաստացի վճարված ընտանիքների թվի աճով:

2017 թվականին «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի ծախսը կազմում էր 39498.3 մլն դրամ (2016 թվականին՝ շուրջ 38362.0 մլն դրամ): Ծախսերը աճել էին 1 136.4 մլն դրամով, որը պայմանավորված էր 2016 թվականի օգոստոսի 1-ից բնակչությանը էլեկտրաէներգիայի սակագնի 4.35 դրամի չափով չփոխհատուցվող ծախսերով՝ կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքներին հատուցելու նպատակով, նպաստի բազային մասը 1.0 հազ. դրամով բարձրացնելու հետ (17 000 դրամի դիմաց): Արդյունքում ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմեց 31 442.2 դրամ 2016 թվականի 30 537.6 դրամի դիմաց՝ պահպանելով նպաստառուների թիվը՝ 104 685 ընտանիք:

Հաշվետու տարում 36.8 մլրդ դրամ, տրամադրվել էր ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին փաստացի նպաստ էին ստացել ամսական միջինը 101870 ընտանիք՝ նախատեսված 101169 ընտանիքի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն էական փոփոխության չէին ենթարկվել:

Գծանկար 3.2.2.1 Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի ֆինանսական ցուցանիշներ (հազ դրամ)



0

Գծանկար 3.2.2.2 Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշներ



ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐ

Առողջապահության ոլորտ

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայությունների ծրագրի 2013-2017 թթ ոչ ֆինանսական ցուցանիշները համահունչ են ընթացել ծրագրի ֆինանսավորմանը, ծառայությունների միավորի արժեքը 5 տարվա ընթացքում տատանվել է 93832.08 դրամից մինչև 111278.2 դրամ: Սակայն սահմանված չեն կամ բացակայում են այնպիսի ոչ ֆինանսական ցուցանիշներ, որոնք են՝ մեկ հիվանդի բուժման միջին տևողությունն ըստ տեսակների, ինչպես նաև մեկ հիվանդի մեկ օրվա միջին ծախսն ըստ տեսակների:

Սրտի վիրահատության ծառայություններ

Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների ծրագրը իրականացվել է 2015-2017թթ.: 2015 թվականին արվել էր 1411 վիրահատություն, որի մեկ դեպքի ինքնարժեքը կազմել էր մոտավորապես 674057 դրամ նախատեսված 1190363-ի դիմաց, և արդյունքում ավելի շատ դեպք էր վիրահատվել նույն գումարով: 2016 թվականին նախատեսվել էր 3505 վիրահատության (դեպք), մեկ դեպքի համար միջինում ծախսելով 1032943 դրամ, սակայն փաստացի վիրահատվել էր 5748 դեպք, որի մեկ դեպքի վրա ծախսվել էր 629075.4 դրամ: Իյուջեով նախատեսվածի համեմատ ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: 2017 թվականին նախատեսվել էր վիրահատել 6827 դեպք 513955.7 դրամով, փաստացի կատարվել է 7167 դեպք յուրաքանչյուր դեպքի համար ծախսելով 485361 դրամ: 2017 թվականին մեկ դեպքի վրա ծախսված գումարը զգալիորեն պակաս էր նախորդ երկու տարիներից: Պետք է հստակ սահմանվի մեկ սրտի վիրահատության արժեքը յուրաքանչյուր տարվա սկզբում իյուջեում ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները ավելի ճիշտ պլանավորելու նպատակով: Սակայն պետք է նշել, որ այս ծրագիրն այլևս առանձին չի երևում 2018թ իյուջեում, և չկան բանակական ցուցանիշներ սրտի վիրահատության ծառայությունների վերաբերյալ:

Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ

